

Մէկ պղտիկ տիւռ էլ չոկ էրաց, տեսաւ՝ մէկ ձի էնդեղ կապուկ ի մընակ, խաւիրն էլ էլած, էնքան ծրտած վերայ, ձին էլ հատրկած¹⁾: Դաւիթ ինչ ձեռ էտու վերք քեամկին, աքիւց²⁾ էզար պատին, կրակ մօտէն կինաց:

Ուրախացաւ, էլաւ զձիու գլեոխ պագնից. զձին էխան տիւս, տարաւ, թասլիմ³⁾ պառուուն էրաւ:

— Ա՛յ որտի, քիւ խօր Գիւռիկ-Չալալին որ կայ, էդ ի էսաց.— Պառաւ, մէկ գլեոխ սապուն, երկու պղինձ ջիւր կ'տաքցուցիս, լաւ կ'վլաս:

Դարձաւ Դաւիթ, էկաւ մատ խրօխպէր.— Խրօխպէր, քենէ կ'ուզիմ իմ խօր աւադալըն լ), թամամ⁵⁾ կ'խանիս, տաս իմ ձեռ:

էսաց.— Ո՛րտի, իս կարողութիւն չ'ունիմ խանիլիւ, քիւ խէր ինչ մեռիր ի, սնդկի տիւռ փակիր ի. իս չիմ կերի⁶⁾ խանի տիւս, տիւ կինա՛, խան:

Կինաց, էնդեղ կանգնից Դաւիթ, կանչից ուր Աստուած, էլաց, սնդկի տիւռ զինք զինք բացուաւ: Բանիր էխան տիւս: Յառաջ խագաւ ջգմէք, քեառսուն զիտր բամբակ իտի՝ անջախ կանգնաւ վուտքիր. էլաւ կապէն կազըֆին խագաւ, էրկու տակ էրաւ, անջախ սըթըրուաւ. քեամարն ի ոսկին, ինչ մէկ փաթ⁷⁾ խօր մէչացն էր, եօթ փաթ էկաւ էնուր մէչաց. քեառսուն զիտր բամբակ իտի գիւտին, անջախ դադրաւ գլեոխ. թուր էլաւ կապից վերան, եօթ փաթ էկաւ պիւլիւր մէչաց, տալ կէսն գետըն կ'առնէր:

Պառաւ զձին վլաց, իպի, Դաւթի տեռու կայնացըցուց: Դաւիթ էլաւ, զին իտի վերայ, գեամ իտի բերան, էլաւ զձին խեծաւ, տուան կանգնաւ:

Չէնով-Յեովան էսաց.

«Ափսճւս, խազա՛ր հէֆ ափսուս Գիւռիկ-Չալալին *),
ա՛խ հալա Գիւռիկ-Չալալին.

1) Կեղտոտած: 2) Աքացի: 3) Յանձնել: 4) Տուն, ստացուածք: 5) Լրիւ, ամբողջ: 6) Չեմ կարող: 7) Մէկ տակ, մէկ անգամ: *) Բ. վարիանտով ասում է.